ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/43» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«07» նոյեմբերի 2022թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

Արմինե Մարգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – տնտեսագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ նաև Համակարգ) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.

1.1. Լեվան ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև 4-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

1.2. Մեգաօֆիս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

1.3. ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2 կամ Հավելված N 1.3), ինչպես նաև 7-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) չէ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի /հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1. Լեվան ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

-ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված 1.2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- 4-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար:

2.2. Մեգաօֆիս ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում-հայտարարության երրորդ նախադասության մեջ գործունեության հասցեն լրացված է ոչ ամբողջական,

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան (հայտում առկա ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎ՝ Հավելված N 1.3-ը ավելորդ է և գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել),

- 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.3. ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) (այսուհետ՝ դիմում-հայտարարություն) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- Հավելված 1-ին վերաբերող տեղեկատվության մեջ, ինչպես նաև դիմում-հայտարարության առաջին նախադասության մեջ սխալ է նշված գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/43» ծածկագրի փոխարեն նշված է «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/112» ծածկագիրը,
- դիմում-հայտարարության առաջին նախադասության մեջ սխալ է նշված պատվիրատուի անվանումը՝ «Դատական դեպարտամենտ»-ի փոխարեն նշված է «ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», ինչպես նաև Համակարգում նշված տեղեկատվության համաձայն ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ ՍՊԸ-ն մասնակցել է ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժիններին, այն դեպքում, երբ հիշյալ նախադասության մեջ նշված են հետևյալ չափաբաժինները՝ «1,2,3»,
- դիմում-հայտարարության երրորդ նախադասության մեջ լրացված չէ մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը (լրացված է մասնակցի հայերեն անվանումը), միաժամանակ երրորդ նախադասության մեջ գործունեության հասցեն լրացված է ոչ ամբողջական,
- դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4 դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. նոյեմբերի 09-ին՝ ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/43» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետի պահանջներով՝ հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել Մեգաօֆիս ՍՊԸ-ին, ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **նոյեմբերի 08-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4 դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

_____ Արմինե Մարգարյան

Քարտուղար՝

_____ Արուս Խաչատրյան